

27503

C.1930/1969

115 JAN 2010

ԱՍՔԻՆ ԿԳԿ-ԻՆ ԿԵՑ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՅԵՎ
ԽԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ ԱԶԱԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՀՐԱՏԱԿ

ԳՅՈՒՂԵՐՐՈՒՐԴՆԵՐԻՆ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐԿԻ ՅԵՎ ԽՆԱ-
ՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ ԱԶԱԿՑՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ-
ՆԵՐԻՆ*)

Հրատարակում է ԽՍՀՄ եղի և ժեկ
1929 թ. 15 Մայիսի վրացական 9 և 24:
հոդվածների հիմունքով

- ## 1. ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Գյուղինքորհութեաբին կից

1. Գյուղիսորհուրդներին կից Պետական
վարչին և խնայողական գործին աջակցող
հանձնաժողովները կազմակերպվում են ինչ-
պես մշտակես գործող հանձնաժողովներ
հետեւյալ ձևով՝ Հանձնաժողովի Նախագահը
Գյուղիսորհուրդի Նախագահն եւ ՀԱՄԿԿ (Բ) և
ԼԿՑԵՄ բջիջը, պրոֆեկտորապությունը,

*) Այս հրահանգը հրատարակվում
է գյուղխորհուրդների աջակցության հանձնա-
ժողովի 1929 թ. հրատարակած հրահանգի փո-
խարեն.

19 FEB 2013

27503
Հաջոյ

Խնայողական գրամարկը, գյուղատընտեսական վարկային ընկերությունը, փոստը և կոռպերատիվ կազմակերպություններն իրենց կողմից մեկական ներկայացուցիչներ են ընտրում հանձնաժողովի կազմի մեջ մտնելու համար։

Հանձնաժողովի կազմի մեջն են մտնում նույնպես չքավորական խմբակներից 2 մարդ, գյուղական սահմաններում գտնվող կուլտնառություններին և ֆաբրիկ-գործարանային ձեռնարկություններին կից աջակցության հանձնաժողովների կողմից՝ մեկական ներկայացուցիչ։ Բացի գրանից, գյուղխորհրդիկի վորոշման հիմունքով, հանձնաժողովի կազմի մեջ կարող են մտնել գյուղական ակտիվ աշխատավորները — արակտորիստները, գյուղատնեսները, խօճիթները և այլն։

2. Գյուղխորհրդին կից աջակցության հանձնաժողովի վճռով նրա կազմից լիազորներ կարող են նշանակվել այն բնակակետերի համար, վորոնց միացնում են գյուղխորհրդիկը։

Ծանոթություն. — Յանկալի յեւ, վորհանձնաժողովի կազմի մեջ մտնեն այն ընկերները, վորոնք մասնակցել են փոխառությունների գետեղման, «ամսական խնայումների» աշխատանքներին և նրանք, վորոնք ներկայեն յեղել շահումների վիճակահանությանը, վորպես հանձնաժողովի անդամներ կամ պատգամավորներ, ինչպես և դորացրված կարմիր բանակայիններն ու գյուղի կուլտուրական աշխատավորները։

3. Աջակցության հանձնաժողովի լիազորության ժամկետը 1 տարով է սահմանվում։ Աջակցության հանձնաժողովի ժամկետառաջ արձակումը կատարվում է գյուղխորհրդի պահանջով, յեթե այդ պահանջը հասնալում է ՇԳԿ-ին կից աջակցության հանձնաժողովը և 2. Շրջգործկոմին կից աջակցության հանձնաժողովի պահանջով։ Հանձնաժողովի ամբողջ կազմի ժամկետառաջ արձակումից անկախ նույն կարգով կարող է ժամկետից առաջ հետ կանչվել հանձնաժողովի այս կամ այն անդամմը, յեթե գործունյա չե։

4. Հանձնաժողովն իր առաջին նիստում ընտրում է նախագահի տեղակալ և քարտուղար։ Նախագահի և նրա տեղակալի վրա պարտավորություն ե գրվում զեկավարել աջակցության հանձնաժողովի աշխատանքն ընդհանրապես, կենդանի կապ պահպանել Շրջգործկոմին և կոլտնտեսություններին կից աջակցության հանձնաժողովի հետ, ինչպես Փինըամնիմուտակա խնայզրամարկղի և գյուղատնեսական վարկային հիմնարկների հետ։ Փարտուղարի վրա պարտավորություն ե գրվում ձեւակերպել հանձնաժողովի բոլոր վճիռները, հսկել դրանց կատարման վրա և ստուգել կատարումը։

Ծանոթություն. — Յանկալի յեւ հանձնաժողովի քարտուղար ընտրել գյուղի կուլտուրական աշխատավորներից (ուսուցիչ, խօճիթվար, գյուղատնես և այլն)։

5. Հանձնաժողովը դումարվում ե ամիսը
1 անդամից վոչ պակաս, իսկ իրացման ժամա-
նակ՝ 2 անդամից վոչ պակաս։ Նիստերի մի-
ջանկյալ ժամանակ գործնական աշխատանքնե-
րը կատարում են աջակցության գյուղական
հանձնաժողովի նախագահը, նրա տեղակալը
և քարտուղարը։ Աջակցության գյուղական
հանձնաժողովի ամեն մի անդամին հանձնա-
ժողովի նախագահը, կամ նրա տեղակալը,
ըստ իրենց հայեցողության, վորոշ աշխա-
տանք են հանձնաբարում մշտապես կատարե-
լու։

Ծանոթության. — Նախագահը,
նրա տեղակալն ու քարտուղարն ընթացիկ բոլոր
գործնական աշխատանքը կատարելիս, վոչ մի
դեպքում չեն կարող գյուղական հանձնաժո-
ղովի ամբողջական աշխատանքը փոփոխու-
թյան յենթարկել.

6. Գյուղխորհուրդին կից աջակցու-
թյան հանձնաժողովի աշխատանքի ընդհանուր
զեկավարությունը վարում ե Շրջործկոմին
կից աջակցության հանձնաժողովը։ Աջակցու-
թյան հանձնաժողովի տեխնիկական հրահան-
դումն իրագործում են ինայողական դրամարկ-
ղը և վարկային հիմնարկներից այն մեկը, վոր
գտնվում ե տվյալ կամ մոտակա գյուղում։

7. Աջակցության հանձնաժողովը 6 ամիսը
մի անդամ հաշիվ ե տալիս գյուղխորհուրդնե-
րին։ Բացի դրանից, գյուղխորհուրդներին
կից աջակցության հանձնաժողովները միե-

նույն ժամկետներով հաշիվ են ներկայացնում
Աջակցության Շրջանային հանձնաժողովին՝
կամ բանավոր զեկուցման ձևով, կամ գրավոր
համառոտ հաշվետվությամբ։


Ծանոթություն. — Պարտատոմսերի վաճառ-
քի և գյուղի ընդհանուր վերահսկողու-
թյան վերաբերյալ աշխատանքի մա-
սին՝ գյուղական հանձնաժողովը յու-
րաքանչյուր յերեք ամիսը մի անդամ
հաշիվ ե տեսնում շրջանային հանձնա-
ժողովի առաջ։

8. Գյուղխորհուրդին կից Աջակցության
հանձնաժողովը պարբերաբար հաշվետվ զե-
կավարումներ ե լսում, վոր ներկայացնում են իր
նայողական գրամարկներն ու կոլտնտեսու-
թյուններին և խորտնտեսություններին կից
աջակցության հանձնաժողովներն՝ իրենց կա-
տարած աշխատանքի մասին։

2. Կոլտնտեսություններին կից.

9. Բոլոր կուլեկտիվ տնտեսություններին
կից (արտելներին, կոմմունաներին) պետական
վարկին և խնայողական գործին աջակցող
հանձնաժողովներ են կազմվում հետեւյալ
ձևով։

Կոլտնտեսության վարչությունը, Համկե
(ր) և ՀԼԿՅԵՄ տեղական բջիջները, կինակ-
տիվը հանձնաժողովի համար մեկական ներկա-
յացուցիչ են ընտրում իրենց կողմից։ Բացի
դրանից, Հանձնաժողովի կազմի մեջն են մըտ-



նում կոլտնտեսականների ներկայացուցիչները՝
4-ից վոչ պակաս թվով։ Կոլտնտեսականներն ի-
բենց կողմից ներկայացուցիչները ընտրելու հա-
մար հատուկ (ընդհանուր կամ պատվիրակա-
յին) ժողով են գումարում։

Ծանոթություն. — Հանձնաժողովի կազմի
մեջ մտնում են նաև այն խնայագրա-
մարկղների և գյուղատնտեսական
վարկային ընկերությունների ներկա-
յացուցիչները, վորոնք կոլտնտեսու-
թյան սահմանների մեջ են մտնում կամ
նրան են սպասարկում։

10. Յեթե կոլտնտեսությունն առանձին
ինքնուրույն տնտեսական մասերի (տնտեսու-
թյունների) յե բաժանվում, իսկ կոլտնտեսու-
թյան վարչությունը միայն տնտեսության աշ-
խատանքն ե ղեկավարում, այդ պարագայում
միայն տնտեսություններին կից են կազմա-
կերպվում աջակցության հանձնաժողովներ։
Այդ դեպքերում կոլտնտեսության վարչության
կից աջակցության հանձնաժողովներ չեն կազ-
մակերպվում։

11. Այն կոլտնտեսություններում, վորոնց
մեջ մնացած ծխերի թիվը 50-ից պակաս ե,
առանձին հանձնաժողովներ չեն կազմվում։ Այդ
դեպքում կոլտնտեսությունն իր կողմից լիա-
զոր ե ընտրում, վոր մտնում է գյուղխորհուրդ-
ներին կից հանձնաժողովի կազմի մեջ։

Յեթե կոլտնտեսությունը կամ կոլտնտե-
սության մասերը (տնտեսություն), վորոնց

կից աջակցության հանձնաժողովներ կան, մի
քանի բնակակետեր են միացնում, այդ դեպ-
քում ամեն մի կետի համար աջակցության
հանձնաժողովն իր լիազորն ե ընտրում։

12. Կոլտնտեսություններին կից աջակցու-
թյան հանձնաժողովների աշխատանքի ընդհա-
նուր ղեկավարությունը վերապահվում է գյուղ
խորհուրդներին կից աջակցության հանձնաժո-
ղովներին։ Աջակցության հանձնաժողովների
տեխնիկան սպասարկումն իրագործում են
այն խնայողական գանձարկը կամ վարկային
հիմնարկները, վորոնք գտնվում են կոլտնտե-
սությանսահման մահներում։

13. Կոլտնտեսություններին կից աջակցու-
թյան հանձնաժողովների լիազորության ժամ-
կետները և վերնտրության կարգը վորոշվում
ե սույն հրահանգի օրդենի կետի համաձայն։ Կոլ-
տնտեսություններին կից հանձնաժողովները
հաշիվ են տալիս գյուղխորհուրդներին կից
հանձնաժողովներին և ամիսը մեկ անգամ ից վոչ
պակաս։

Ծանոթություն. — Խորհուրդնեսություննե-
րին և մեքենատրակտորային կայան-
ներին կից աջակցության հանձնաժո-
ղովները կազմակերպվում են նույն
հիմունքներով և գործում են նույն
կանոններով, ինչպես և ձեռնարկու-
թյուններին, ինչպես և ձեռնարկու-
թյուններին կազմակերպություններին կից ա-
ջակցության հանձնաժողովները։

14. Կոլանտեսություններին կից աջակցության հանձնաժողովներն ամեն տեղ պետք է կազմակերպվեն 1930 թվի հուլիսի 1-ից վոչ ուշ։

Ա ԱԶԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ.

15. Գյուղաբնակություններին և կոլանտեսություններին կից աջակցության հանձնաժողովները պետական փոխառություններին և խնայողական գործին վերաբերյալ բոլոր հարցերի մասին պետք է տեղեկանքներ, բացառություններ և խորհուրդներ տան։ Հատուկ ուշադրություն պետք է նվիրել խրճիթ-ընթերցարանին, կարմիր անկյուններին կից «փոխառությունների և խնայագրամարկղների անկյուն» կազմակերպելու հարցին, վորոնց կից տեղեկատու սեղաններ են կազմակերպվում։ Այդ սեղաններում են կենարունանում փոխառություններին և խնայողական գրամարկղներին վերաբերյալ տեղեկատու, իրացատրական և ազխասացին նյութերը։ Գյուղխորհուրդներին կից աջակցության հանձնաժողովները տեղեկատու աշխատանքի նյութերն ստանում են ֆինանսական բաժնեից, գրամարկղից կամ աջակցության շրջանային հանձնաժողովից, իսկ կոլտնտեսություններին կից հանձնաժողովները՝ գյուղխորհուրդներին կից հանձնաժողովներից։

16. Աջակցության հանձնաժողովի տեղե-

կատու աշխատանքի կազմակերպման շուրջն ընդարձակ տեղեկություններ նու տրվում՝ աղդաբնակչության (պատթերթերի, հայտարարություններ կախելու, ընդհանուր ժողովներում բանավոր տեղեկություններ հաղորդելու և այլ միջոցներով)։ Տեղեկատու սեղանի կանոնավոր և անընդհատ սպասարկումը կազմակերպելու համար՝ աջակցության հանձնաժողովներն իրենց անդամներից հերթապահություն են նշանակում ցուցակով։

Աջակցության հանձնաժողովի այն բոլոր անդամները, վորոնք հերթապահություն վարելու համար են նշանակվում, պետք է նախապատրաստված լինեն փոխառություններին, խնայողական գործին և նման բաներին վերաբերյալ վորեւ տեղեկանք կամ խորհուրդ տալու։ Դրա համար նրանք պետք է ուշադրությամբ ծանոթանան, այն բոլոր նյութերին, վորոնք ուղանքում են հանձնաժողովին ձեռքի տակ։ Բացի դըրանից, անհրաժեշտ է, վոր տեղական խնայադրամարկղի կամ վարկային հիմնարկի ներկայացուցիչը մի քանի անգամ պարապի հանձնաժողովների անդամների հետ, վարպետությունը նրանք գործնականորեն սովորեն տեղեկանքներ տալ, համեմատել պարտասոմսերի համարը շահումների աղյուսակի հետ, բացատրել թե ի՞նչ է նշանակում հասարակական վերահսկողություն պարտասոմսերի վաճառքի և գրավի վրա վորոշել պարտասոմսերի վճարունակությունը, ինչպիսի պայմաններ կտն փոխառա-

թյունների համար և թե ինչո՞վ է տարբերվում
մի փոխառություն մյուսից, ինչո՞վ են զանա
զանվում իրարից Պետփոխառություններն ու
խնայողական դրամարկղները, նշել՝ թե ի՞նչ
գործառնություններ են կատարում խնայագը-
րամարկղները, ի՞նչ ոգուտ և շահ են բերում
խնայողական դրամարկղները անձնական կեն-
ցաղում, նպատակային խնայումների կազմա-
կերպման կարգը, ավանդների գաղտնապահու-
թյան, անձեռնմխելիության և լիակատար ա-
զատությամբ տնօրինելու մասին, թե ինչպե՞ս
պետք է փոխառություններ անել և թե ինչպե՞ս
պետք է ոգտվել վարկագրերից-ակլրեղիախիվ-
ներից, ինչպես պետք է ոգտվել խնայողական
դրամարկղից դյուղատնտեսական հարկը վճա-
րելու համար և այլն:

17. Տեղեկանքներ տալու աշխատանքն ըս-
կելիս՝ աջակցության հանձնաժղովները պետք
ե հետեւյալ նյութերն ունենան՝ ա. շահումների
տիրաժների որացուցային ցանկը, բ. շահում-
ների աղյուսակը, գ. տեղեկություններ՝ կրտ-
սոնների վճարման ժամկետների մասին, դ.
փոխառություններին, խնայդրամարկղներին
վերաբերքող հանրամատչելի գրականություն,
յե. ագիտպլակատներ և լողունգներ և այլ նյու-
թեր:

Ծանոթություն. -Նոր փոխառություն ի-
րացնելու ժամանակ կամ ամսական
խնայումները վարելիս՝ տեղեկատու
մեղանները պետք ե ագիտացիոն բոլոր

նյութերն ունենան վոչ միայն ահղե-
կանքներ տալու համար, այլ և այդ
նյութերը ցանկացող բոլոր գյուղացի-
ներին, մանավանդ ակտիվ աշխատա-
վորներին մատակարարելու համար:

18. Գյուղխորհուրդներին և կոլտնտեսու-
թյուններին կից աջակցության հանձնաժողով-
ները հսկում են, վոր Խնայողական դրամարկղը,
գյուղատնտեսական վարկի հիմնարկը կամ
տվյալ գյուղում յեղած վարկային այլ հիմ-
նարկներն անբնդհատ կատարեն փախառու-
թյան այն բոլոր գործառնությունները, վոր
պետք և վարեն կենտրոնական որդանների
ցուցմունքների հիմունքով:

9. Յեթե տվյալ գյուղում կամ շենում խր-
նայողական դրամարկղը, գյուղատնտեսական
վարկային հիմնարկը և ուրիշները փոխառու-
թյան ամենապարզ գործառնություններ չեն
կատարում (տոկոսների վճարումներ՝ ըստ
կտրոնների, շահումների վճարումներ, չիշած
պարտատոմսների վճարումներ), գյուղխոր-
հուրդներին կից աջակցության հանձնաժողով-
ները այդ գործառնությունների կազմակեր-
պումը ձեռք են բերում շրջանային հանձնաժո-
ղովի միջոցով:

20. Այն գեպքում, յերբ գյուղխորհուրդ-
ներին կից աջակցության հանձնաժողովները
կգտնեն, թե գյուղում յեղած խնայողական դր-
ամարկղը, գյուղատնտեսական վարկային

Հիմնարկը և մ մ ի ուրիշ հիմնավել է հեծակե յին ավելի բարդ գործառնություններ կատարելու, որինակ՝ պահպանության-փոխատու գործունեյություններ, նրանք համապատասխան միջնորդություն են հարուցում Շրջորդկոմին կից աջակցության հանձնաժողովի առաջ՝ գործառնություններ ն ընդարձակելու մասին:

21. Գյուղիսորհուրդներին և կոլտնտեսություններին կից աջակցության հանձնաժողովներն իրենց աշխատանքը կազմակերպում են կայուն որացուցային պլանների համաձայն, վոր կազմում են յուրաքանչյուր 3 ամսվա համար: Գյուղիսորհուրդներին կից աջակցության հանձնաժողովներն իրենց աշխատանքի որացուցային պլանները ներկայացնում են ի հաստատություն տեղական հասարակական կազմակերպությունների-Համ կկ (թ) բջիջին և գյուղիսորհուրդին:

Կ որտնտեսություններին կից աջակցության հանձնաժողովների աշխատանքի պլանները հաստատում են գյուղիսորհուրդներին կից աջակցության հանձնաժողովները:

22. Փորձի փոխանակություն կատարելու նպատակներով՝ գյուղական հանձնաժողովը ժամանակ առ ժամանակ ձեռնարկություններին կից աջակցության հանձնաժողովների կոնֆերանսներ և գումարում, յեթե այդպիսի հանձնաժողովներ կան գյուղիսորհուրդների ստհմաններում յեղած կոլտնտեսություններին, խորհունտեսություններին և մեքենատրակտո-

րային կայաններին կից, վորտեղ քննության են առնվում աշխատանքին վերաբերող գեկուցումները, նշվու մեն հետագա միջոցները՝ փոխառությունների և խնայողական գործի զարգացման բնագավառու մ:

23. Գյուղիսորհուրդներին կից աջակցության հանձնաժողովները մրցում են կազմակերպում ուրիշ գյուղական աջակցության հաճնաժնաժողովների հետ, ինչպես և կոլտնտեսություններին, խորհունտեսություններին կից աջակցության հանձնաժողովների և Մ. տ. կայանների միջև: Սրան զուգընթաց՝ աջակցության հանձնաժողովները մրցում են կազմակերպում այն ֆաբրիկաների և գործարանների բանվորների կոլեկտիվների և գյուղացիների ստորին արտադրական-կոոպերատիվ միությունների միջև, յեթե այդպիսի ֆաբրիկներ և գործարաններ կան գյուղիսորհուրդի սահմաններում: Մրցման նպատակը պետք է լինի՝

ա. Ամենամեծ չափով փոխառությունների մեջ ընդգրկել տվյալ գյուղի տնտեսությունը. բ. մաս-մաս վճարումներով բաժանորդագրության մուծումներն ամենաարագ կերպով վճարել: Իրացման ժամանակաշրջանից գուրս՝ մրցման նպատակը պետք է լինի:

ա. 100 %-ով համեմատել պարտատմաները շահումների աղյուսակի հետ. բ. ամենալավ կերպով դնել ստուգողական

աշխատանքները. դ. աջակցության հանձնաժողովների լավագույն աշխատանք:

Խնայողական գործի բնագավառում մըրցմաննպատակնեա. գյուղացիներին ամենամեծ թվով ավանդատու զարձնել խնայողական գանձարկղին, բ. ամենամեծ չափով մեծացնել գյուղացիական ներդրումների միջին չափը, դ. ամենամեծ չափով զարգացնել նպատակային կուտակումները, դ. Լավագույն կերպով կաղմակերպել անկանխիկ հաշիվները՝ կոլտնտեսություններում, խորհատնեսություններում և մեքենատրակտորային կայաններում:

III ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱ-
ՏՈՄՄԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՎՐԱ

24. Ինդուստրացման 1-ին, 2-րդ, 3-րդ, և գյուղացիական տնտեսության ամրացման փոխառությունների պարտատոմսերը վաճառելու կամ գրավ դնելու թույլտվությունը տալիս են գյուղական ազգաբնակչությանը՝ գյուղխորհուրդներին կից աջակցության հանձնաժողովները:

25. Կոլտնտեսություններին կից աջակցության հանձնաժողովները պարտատոմսերը վաճառելու և գրավդնելու հայտարարություններ են ընդունում կոլտնտեսականներից և իրենց յեղբակացության հետ միասին ներկայացնում

են գյուղխորհուրդներին կից հանձնաժողովների վերջնական թույլտվության համար:

26. Գյուղխորհուրդներին կից աջակցության հանձնաժողովները թույլտվությունների աշխատանքի համար այնպիսի կարգ պետք է սահմանեն, վորով փոխառատերերից ստացված հայտարարությունների ամենամարագ քննության հնարավորությունն ապահովված լինի: Այս նպատակին համար համար, աջակցության հանձնաժողովները պետք է վոչ ուշ, քան 10 որր մի անգամ նիստեր կազմեն: Իսկ հայտարարությունների կուտակման դեպքում՝ հերթից գուրս նիստեր կազմեն:

Աջակցության հանձնաժողովները պետք է աչքառուտեղում հայտարարություն կախենայն մասին, թե յե՞րբ, վորովեղ ո՞վ և ընդունում փոխառատերերի հայտարարությունները:

27. Պարտատոմսերի վաճառելու կամ գրավդնելու անհատական թույլտվությունը վոչ մի դեպքում թույլ չի տրվում:

Ծանոթություն.՝Աջակցության հանձնաժողովները հասարակական վերահսկողությունն իրագործելու իրենց աշխատանքում պետք է ղեկավարվեն ԽՍՀՄ Աջակցության կենտրոնական հանձնաժողովների և ֆֆկ 1930 թվականի մարտի 8-ի հրահանգով:

IV ԱԳԻՏԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ.

Աջակցության Հանձնաժողովի պետացիոն աշխատանքի նպատակը պետք է լինի՝ ամեն որ լայն բացարություն տալ պետական վարչի և խնայողական գործի նշանակության և խնդիրների մասին և թե ի՞նչ զեր են խաղում նրանք յերկրի ինդուստրացման և գյուղի սոցիալիստական վերանորոգման գործում։


29. Աջակցության Հանձնաժողովները գյուղի հասարակական կազմակերպությունների և առանձին աշխատավորների մասնակցությամբ՝ պետք է կազմին՝ զեկուցումներ, միտինդներ, հարցերի և պատասխանների յերեկոներ, զրգույինների միասնական ընթերցում, զրույցներ՝ թե խմբակային և թե անհատ գյուղացիների հետ և այլն։ Բացի զրանից, Հանձնաժողովները կուլտհիմնարկներին (ակմբին, խրճիթ-ընթերցարանին, դպրոցին և այլն) և գյուղի կուլտուրական ակտիվին (ուսուցիչներին, բժիշկներին, գյուղատնտեսներին և այլն) հրավիրում են ներկայացումներ կազմակերպել, կիոն-պատկերներ և լուսանկար գնել փոխառությունների և խնայողական դրամարկղների հարցերի չուրջը, պլակատներ, լոգունդներ, աֆիշաներ փակցնել և այլն։

30. Աջակցության Հանձնաժողովները հատուկ ու շաղբություն պետք է նվիրեն գյուղական պատի թերթերին և կոլտնտեսական տպա-

գիր թերթերին։ Հանձնաժողովները պետք է աշխատեն, վոր այդ թերթերում մշտական անկյուններ հատկացվեն պետական փոխառությունների և խնայողական գործի հարցերին։ Այն գյուղերում, վորտեղ պատի թերթեր չկան, Աջակցության հանձնաժողովները պետք է միջոցներ ձեռք առնեն այդպիսիններն ստեղծելու՝ այդ գործին հրավիրելով տեղական հասպարակական կազմակերպությունները։

31. Գյուղխորհուրդներին և կոլտնտեսություններին կից Աջակցության Հանձնաժողովները միջոցներ են ձեռք առնում բոլոր տնտեսական-քաղաքական կամ պանխաներն ոգտագործելու գյուղում, պետական փոխառությունների և խնայողական գործի պրոպագանդն ուժեղացնելու համար։ Մասնավորապես, Հանձնաժողովներն այդ նպատակի համար պետք է ոգտագործնեն գյուղխորհուրդների վերընտրությունների կամ պանխան։ Հանձնաժողովները պետք է աշխատեն, վոր հաշվետու ժողովներում քննության առնեն փոխառություններին և խնայողական դրամարկղներին վերաբերող աշխատանքի արդյունքները, Խորհուրդների անդամներին արվող հրահանգների մեջ մտցվեն վարկային հիմնարկների աշխատանքի բարելավմանը վերաբերող գործնական առաջարկները, այն հիմնարկների, վորոնք սպասարկումնեն փոխառատերերին և Խնայողական գանձարկղների ավանդատուններին։

32. Պետական փոխառություններին և



խնայողական գանձարկղներին վերաբերող համամի իրավութենական կամպանիաներն հաջողությամբ տանելու նպատակով՝ դյուզիսորհուրդներին և կոլտնտեսություններին կից աջակցության հանձնաժողովները՝

ա. Նախապատրաստական որացուցային պլան են մշակում, կամ պանիաների արդյունքներն են անցկացնում և ամրապնդում այն գյուղերում և տնտեսություններում, վորոնք տվյալ գյուղով կամ կոլտնտեսությամբ են միացած։ Հանձնաժողովներն այդ աշխատանքին հրավիրում են կուսակցական, կոմյերիտական, արհմիութենական, կոռուպտատիվային, բատրակչքավորական և կանանց ակտիվին, ինչպես և գյուղի բոլոր կուլտուրական ուժերին (խրճիթվար, ուսուցիչ, բժիշկ, դյուզատնտես և այլն)։

բ. Անհատական-գյուղացիների և կոլտնտեսականների հատուկ ժողովներ են կազմակերպում գեկուցումներ տալու այն կամպանիաների մասին, վորոնք տեղի յեն ունենում նրանց գյուղի ըրջանում կամ կոլտնտեսության կոնֆերանսներում։

գ. Շգկ-ին, խնայողական գանձարկղներին, Փինորդաններին կից աջակցության հանձնաժողովներից անհրաժեշտ աղիտացիոն և ուրիշ նյութեր են ստանում, տարածում են աղգաբնակչության մեջ, ինչպես և աչքառու տեղերում լողունգներ, թերթիկներ, դիմումներ և նման բաներ են կախում։

դ. Հանձնաժողովները՝ նախապես համաձայնության դալով գյուղիսորհութիւն և տեղական կոմբինատիվի հետ, ծխերին այցելելու պառույտներ են կազմակերպում, նպատակ ունենալով ժողովրդականացնել պետքուխառությունները, անհատական աղիտացիա տանել, խնայողական գանձարկղների համար նոր ավանդատուններ և փոխառությունների համար նոր բաժանորդներ գտնել։ Բացարձակապես անթույլատրելի յեն վարչական հարկագրանքի վորևէ մեթոդ և ավանդների գաղտնապահությունը պետք և ապահովի և լիակատար կամավորությունը պետք և գործադրվի փոխառությունների բաժանորդագրության և դրամարկղներին ավանդապատճեն ներգրավելու գործում։

յե. Մրցումն են կազմակերպում առանձին անհատական հավաքագրողների, գյուղխորհությունների, գյուղթղթատարների և այլ ակտիվիստների միջև՝ խնայորամարկղների համար ամենամեծ թվով ավանդատուններ և ավանդներ ու փոխառությունների համար ամենամեծ թըգով բաժանորդներ ներգրավելու նպատակով։

զ. Կանոնավոր ինֆորմացիա յեն կազմակերպում կամպանիայի ընթացքի մասին պատիթերթերությում և այլն։



Ե. Կենդանի կապ են հաստատում շրջդործ-
կոմին կից հանձնաժողովների հետ և նրանից
գուցմունքներ են ստանում կամպանիան տանե-
լու ագիտաշխատանքի կարգի մասին:

ԽՍՀՄ ԿԳԿ-ին և Համ. ՌԿԳԿ-ին կից Պետ-
քարելի խնայողական գործին Աջակցող Կենտրո-
նական Հանձնաժողովին նախագահ՝

(Ի. ԿՈՒՏՈՒԶՈՎ)

300

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



ՀԱՅՊՈԼԻԿՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ

Գաղվեր 3658 Դրամել. 5456 (Բ) Տիրաժ 3.000